TEMPUS-VERITAS ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՇՐՋԱՅՑ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

TEMPUS-VERITAS ծրագրի շրջանակներում 2015 թ. նոյեմբերի 14-29 ժամանակահատվածում «Տնտեսագիտություն և կառավարում» ամբիոնի դասախոսներ պրոֆ. Ա Ճուղուրյանը և դոց. Ա. Ավետիսյանը մեկնեցին Եվրոպական չորս երկրների համալսարաններ՝ Ստոկհոլմի KTH տեխնոլոգիական համալսարան, Անգլիայի Բաֆ քաղաքի BATH-SPA համալսարան, Իսպանիայի Ջերոնա քաղաքի “Gerona” համալսարան, Գերմանիայի Հայդենբերգ քաղաքի համալսարան:

Այցի նպատակը նշված բոլոր համալսարաններից յուրաքանչյուրում եռօրյա ժամանակահատվածում դոկտորանտուրայի կազմակեպման փորձի ուսումնասի-րումն էր: Մասնավորապես.

- նոյեմբերի 14-18-ը

Ստոկհոլմի KTH տեխնոլոգիական համալսարանում ուսումնասիրվեց ասպիրանտների ղեկավարման ինստիտուտը, վերլուծության ենթարկելով գիտական ղեկավարի գործունեության արդյունքների չափանիշները,

- նոյեմբերի 18-22-ը

Անգլիայի Բաֆ քաղաքի BATH-SPA համալսարանում ուսանելի էր գիտահետազոտական ծրագրերում դոկտորանտների մասնակցության փորձը, որը ներակայացվեց ոչ միայն գիտական ղեկավարների, այլ տվյալ բուհում սովորող ասպիրանտների կողմից:

- նոյեմբերի 22-25–ը

«Gerona»-ի համալսարանում արժեքավոր էր տեխնոպարկերի կազմակերպման, ինչպես նաև գիտության և արտադրության փոխկապակցման փորձը, որի արդյունքում հնարավոր էր դառնում համալսարանում սովորող ասպիրանտի գիտական նորույթների վաճառահանումը բիզնեսի ներկայացուցիչներին և դրանով իսկ դոկտորանտուրայում ֆինանսական ռեսուրսների ձևավորման հնարավորությունների ձեռքբերումը:

- նոյեմբերի 25-28–ը

Հայդենբերգի համալսարանում ուսանելի էր ասպիրանտների ընդունելության և դրանց գիտահետազոտական աշխատանքների որակական վերահսկողության փորձը, երբ ասպիրանտը համարվում էր հիմնականում ոչ թե ատենախոսություն շարադրող. այլ կոնկրետ գիտական ծրագրում վարձու աշխատող, ստանալով կոնկրետ հանձնարարություններ և վարձատրվելով իր իսկ կատարած աշխատանքի դիմաց:

Եվրոպական համալսարաններում կատարված շրջայցի արդյունքները ներկայացվել են Հյուսիսային համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմին, որին հետևել են մի շարք եզրահանգումներ ասպիրանտական կրթության բարեփոխումների ուղղությամբ:

1. Միջոցներ ձեռնարկել Հյուսիսային համալսարանում ասպիրանտական կրթությունը դարձնելու առավել շուկայամետ, փորձելով պայմանագրեր կնքել գործատուների հետ՝ նրանց իսկ պատվերով գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու համար:

2. Հնարավորինս բուհում սովորող ասպիրանտներին ընդգրկել պատվիրատուի հետ կնքված գիտահետազոտական աշխատանքների պատվեր-ծրագրերում:

3. Մշակել նախագծեր, որոնք հնարավորություն կտան կիրառելու ատենախոսությունների համատեղ ղեկավարման փորձը՝ գիտական ոչ թե մեկ, այլ մի քանի համաղեկավարներով:

4. Միջոցներ ձեռնարկել ասպիրանտների գիտահետազոտական աշխատանքների որակական արդյունքների ընթացիկ վերահսկողական համակարգի բարելավումների ուղղությամբ: